ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

† ՌԱՖԱԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ՝ Նոր-Նախիջևանից ստացանք հետևեալ տխուր լուրը. «23 օգոստոսի ժամ 1 և 37 բոպէ կէս գիշերից յետոյ. Խմբագրութեան «Մուրճ» ամսագրի.

Ռաֆայէլ Պատկանեանը վախճանուեց. թաղումը քսանուչորսին.

Փաղաքչուի Բալաբեան»։

Ռաֆայէլ Պատկանեանը այն մեծութիւններից է, որոնց մասին խօսք դրելը պատկանում է «Մուրճ»-ի ալ աւելի կարևոր բաժիններին։ Թողնելով հանգուցեալի գործերի գնահատութիւնը, որ ապուհետև դեռ երկար տարիներ մեր քննական գրականութեան կարևոր թեմաներից մէկն է կազմելու, բաւականանում ենք ասելու, որ հանգուցեալը, առանց որ և է կասկածի, հայկական նոր բանաստեղծութեան մէջ ամենանշանաւոր քանքարն էր։

Ցաւում ենք, որ Պատկանեանի մահուան մասին վերը առաջ բերած հեռագիրը մեր ձեռքը հասաւ միայն օգոստոսի 25-ին, հանգուցեալի թաղումից յետոյ։—Հարց ենք տալիս, արդեօք Պատկանեանի մարմինը չը պէտք է փոխադրել Թիֆլիսի Մայր-եկեղեցու գաւիթը, կամ նոյն իսկ Էջմիածնի մօտերքը։ Հայոց գրականութեան մի այնքան մեծ ատող, որպիսին է հանգուցեալը իւր հայրենական երգերով պէտք է հանգչի հայ ժողովրդի սրտին աւելի մօտ մի տեղում։

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑԻ ԴԱՍԱԳԻՐՔԸ. Վրաստանի և Իմերեթի հայոց եկեղ.-ծխական դպրոցների թեմական տեսուչ Եղիշէ քհն. Գեղամեանից ստացած ենք հետևեալ շրջաբերականը «Մուրճ»-ում տպագրելու խնդիրքով.

«Այսու յայտնում եմ ի գիտութիւն Վրաստանի և Իմերեթի թեմի եկեղեցական ձխական ուսումնարանների պ.պ. աւագ ուսուցիչներին և մեծաբելի աւագ ուսուցչուհիներին, որ Ս. Էջմիածնի Մայր-Աթոռի Ուսումնական-Վարչական Յանձնաժողովի հրամանագրութեամբ, որ 'ի 14 սոյն լուսիսի № 27, նորից թոյլատրուած է պ. Ղազարոս Աղայեանի «Ուսումն մայրենի

լեզուի» դասագրքերի կիրառութիւնը մեր ուսումնարաններում։

Թեմական Տեսուչ Եղիշէ քահ. Գեղամեանց։

'ի 21-ն յուլիսի 1892 ամի, 'ի Սաբունչի։

Մեր ընթերցողներին հասկանալի դարձնելու համար Ուսումնական Ցանձնաժողովի այս կարգադրութիւնը, պէտք է յիշեցնենք որ պ. Աղայեանցի դասագրքերը արգելած էին դպրոցական գործածութեան համար միմիայն այն պատճառով, որ նա վստահացել էր դեռ ևս մինչ այժմ տիրող խառնաշփոթութեանը ա-ի, է-ի և ու-ի ուղղագրութեան մէջ միակերպութիւն և կանոնաւորութիւն մտցնելու իւր դասագրքերում, ընդունելով այն ուղղագրութիւնը, որին ի միջի այլոց հետևում է «Մուրճ»-ը, այսինքն հնուց մնացած երեք տեսակ բաղաձայն ա-ե-րից դէն գցելով ոչ ոքին հարկաւոր ու ձևը։

Էջմիածնի ուսումնական, վարչական մասնաժողովին կարող ենք միայն շնորհաւորել պ. Աղայեանցի դասագրքերի առիթով արած վճռի համար, պաշտօնական սանկցիա տալով մի ուղղագրութեան, որ յարմարութիւնից զատ՝ հասանութիւն է գտած մեր գրականութեան ներկայացուցիչներից շատերից և որի կենսունակութիւնը ապացուցած է այդ ուղղագրութեամբ տպած և ժողովրդականացրած բազմաթիւ գրքերով ու երեք պարբերական հրատարակութիւններով։

«Արարատ» ամսագրի յուլիսի տետրում տպած օրագրութիւնից իմանում ենք ի միջի այլոց, որ Ուսումնական-վարչական յանձնաժողովը 1871 թւին (երևի 1891 թ.) յուլիսի 16-ին թեմերի առաջնորդներին ուղղած է եղել մի շրջաբերական, ուր ի միջի այլոց հետևեալն է ասած. «Պարտաւորեցուցանել զաւագ ուսուցիչս և զաւագ ուսուցչուհիս, զի ի զանազան բաժանմունս ինքեանց յանձն եղեալ ուսումնարանաց պահպանեսցեն զմիակերպութիւն ուղղագրութեան լեզուի. Խ ո ս ի ւ ա ր գ ե լ ե լ զ գ ո ր ծ ա ծ ո ւ թ ի ւ ն այնոցիկ դասագրքոց, որք տպագրեալք են ն ո ր ա հ ն ա ր ո ւ ղ ղ ա գ ր ո ւ թ ե ա մ բ ք, նոյնպէս և զգուշանալ յ ա զ դ ե ց ո ւ թ ե ն է նոյն օ ր ի ն ա կ ո ւ ղ ղ ա գ ր ո ւ թ ե ա մ բ տ պ ա գ ր ե ա լ գ ր ե ն ո ց և պ ա ր բ ե ր ա կ ա ն հ ր ա տ ա ր ա կ ո ւ թ ե ա ն ց»։

Մեր նկատողութիւնը այդ մասին կ'անենք «Մուրճ»-ի հետևեալ համարում։

«ՀԱՅՐԵՆԻՔ» լրագիրը, որ վերջին ամիսներս արգելած էր հրատարակւելու, այժմ նորից սկսել է հրատարակւել և նորա համարները սկսեցինք կանոնաւորապէս ստանալ։ «Հայրենիք» լրագրի խմբագիրն է պ. Արփիար Արփիարեան։

† ՄԱՄԲՐԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ. Ներկայ օգոստոս ամսի 2-ին վախճանւեց Թիֆլիսի մօտ Կոջոր ամառանոցում երկարատեւ հիւանդութիւնից յետոյ Թիֆլիսի (Վրաստանի և Իմերեթիայի) հայոց թեմական առաջնորդ սրբազան Մամբրէ եպիսկոպոսը։ Հանգուցեալը իւր առաջնորդութեան պաշտօնում փոխարինեց Արիստակէս եպիսկ. Սեդրակեանին 1889 թւականի դեկտեմբեր ամսում, հետեւապէս Թիֆլիսի առաջնորդն եղաւ մօտաւորապէս 2 տարի ութ ամիս։ Հանգուցեալը ուսումով ու կրթութիւնով անպատրաստ լինելով՝ չիմացաւ առաջնորդութեան գաւազանը վարել ժամանակիս նոր և աւելի մեծ պահանջների համեմատ։ Միակ բանը, որ թերևս խրախոյս էր գտնում հանգուցեալ առաջնորդից՝ եկեղեցական-ծխական ուսումնարաններն էին, որոնց թիւը, թէև պաշտօնապէս մեզ անյայտ, բայց պէտք է որ զգալի կերպով աւելացած լինի նորա հովւութեան ժամանակ։

ԲԺՇ. Ն. ՈՒՄԻԿԵԱՆԻ «Սննդառութիւն և կերակուր» վերնագրով յօդուածի այս համարի երես 1130-ի ծանօթութիւնը պէտք լինի հետեւեալը. «Նոյնը կարելի է ապացուցանել և ստամոքսային գեղձերի վերաբերեալ։ Շների ստամոքսային արհեստական կեղանկային վէրքի (фистула) միջոցով կարելի է տեսնել գեղձի յանկարծակի երեւալը ստամոքսի մակերեւոյթի վերայ»։

ՎՐԻՊԱԿՆԵՐ «Մուրճ»-ի անցեալ № 6-ում.

	տպւած է	ուղիղն է
Ն. Ումիկեանի յօդուածում՝		
էջ 910, վերևից տող 14.	Rischoff	Bischoff
էջ 914, ներքևից տող 13.	Rischoff	Bischoff
Գրախօսութեան մէջ Գ. Խալաթեանցի՝		
էջ 939 վերևից տող 39.	Խաւունիք	Հաւունիք
էջ 947 ներքևից տող 6.	հեչտութեամբ	հմտութեամբ
Սրաժշտական քրոնիկում՝		
էջ 982 ներքևից տող 2.	իդէալական	իտալական
էջ 983 վերևից տող 3.	բոմաններ	բոմանսներ
Քաղաքական Տեսութեան մէջ		
էջ 987 ներքևից տող 8.	ներկայացրած էր	ա յ դ օ ր ի ն ա գ ի ծ ը ներկայացւած էր
էջ 993 ներքևից տող 5.	եօթը տարի է	վեց տարի է

Խմբագիր՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆՑ